ՊԱՏՄԱԿԱՆ

Ս. ԵՐԿՐԻ

ՎԱՆՔԵՐՈՒ ԵՒ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Թ. ԴԱՐՈՒ ԿԱՐԵՒՈՐ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՄԸ ԵՒ ԱՆՈՐ ՊԱՏՄԱԿԱՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Այս յիշատակարանը որ լատիներէն գրուած էր Թ. դարու սկիզբը (808), Թագլէր գերմաներէնի թարգմանած է ընտիր մեկնաբանութեամբ մը, իսկ գնդապետ Վաթսըն ալ նոյնը թարգմանած է անգլիերէնի՝ կցելով անոր շահեկան ծանօթագրութիւններ։ Այս յիշատակարանին ձեռագիրը պահուած էր Պալի հանրային գրատան մէջ. հեղինակը կը թուի թէ Մեծն Կարոլոս կայսեր իշխանութեան ժամանակ Ս. Երկիր ղրկած էր վանական մը որպէս զի տեղւոյն քրիստոնէից մասին տեղեկութիւններ հաւաքէ, հաւանաբար կայսեր պէտքին համար։ Մեծն Կարոլոս, ինչպէս ծանօթ է, Պաղտատի Հարուն էր-Ռաշիտի հետ լաւ յարաբերութիւն կը մշակէր և կնքած էր բարեկամութեան դաշինք մը և անոր համաձայն սկսած էր նորոգել Երուսաղէմի եկեղեցիները. և շինեց լատին Ս. Աստուածին անուամբ եկեղեցի մը, որուն յարակից շինուեցաւ Ս. Երկրի լատինախօս ուխտաւորներու հիւրանոց մ'ալ։

Այս յիշատակարանին սկզբնական ձեռագիրը հատուածներու բաժանում չէ ունեցած. մէկ ծայրէն միւսը գրուած է առանց ընդհատի. բայց անգղ. թարգմանիչը հատուածներու բաժնած է զայն, որպէս զի ընթերցողը կարող ըլլայ դիմելու այն պատմական ծանօթութեանց զոր թարգմանիչը աւելցուցած է յիշատակարանին վերջը։ Այս ծանօթութիւնները որ ընդարձակօրէն գրուած են, կը խօսին Երուսաղէմի և շրջակայից եկեղեցիներու մասին։

Թարգմանութիւնը

1.— Ներկայս ցուցակագիրն է Երուսաղէմի և շրջակայից մէջ գտնուած եկեղեցիներուն և վանքերուն, եպիսկոպոսներուն, քահանաներուն, սարկաւագներուն, վանականներուն և բովանդակ կղերին որ կը ծառայէ Ս. Տեղերը և կուսանոցներուն մէջ։

2.— Առաջին Ս. Տեղւոյն՝ Քրիստոսի Ս. Դերեզմանին ծառայութեան մէջ են. 9 քահանաներ, 14 սարկաւագներ, 6 կիսասարկաւագներ, 23 կանոնիկոս, 13 պահապաններ, 41 վանական, 12 անձեր՝ որ պատրիարքին առջևէն կը քալեն լապտերներով, 17 անձեր՝ որ պատրիարքին կը սպասաւորեն, 2 հսկող, 2 հաշուակալ, 2 նոտար, 2 քահանայ որ միշտ արթնութեամբ կը հսկեն Քրիստոսի Ս. Դերեզմանին վրայ։

3.— Քահանայ մը կը գտնուի Ս. Գողգոթայի մէջ. Տիրոջ Բաժակին տեղը՝ 2 քահանայ, Ս. Խաչի և Դաստառակի տեղւոյն մէջ 2 քահանայ և 1 սարկաւագ։

4.— Հոն կան սենեշալներ (seneschale) որ պատրիարքին հրամանին տակ կը պահպանեն բոլոր իրեղէնները, 2 մառանապետներ, 1 դանձապահ, 1 պահապան աւազաններու, 9 դռնապան։ Ամբողջ թիւն է 150, դուրս մնալով 3 հիւրընկալները։

5.— Ս. Սիոնի մէջ կան 17 քահանայ և կղերիկոս, 2 վանական՝ Աստուծոյ նուիրուած։

6.— Ս. Պետրոսի եկեղեցիին մէջ, ուր ան ապաշխարեց, կան 5 քահանայ և կղերիկոս։ Վանատան մէջ 5 քահանաներ։

7.— Ս. Աստուածածնի նոր եկեղեցիին մէջ, զոր շինած է Յուստինիանոս կայսրը, 12 քահանաներ։

8.— Ս. Թալալոս՝ 1 քահանայ, Ս. Գէորգ՝ 2 քահանայ։

9.— Ս. Աստուածածնի եկեղեցիին մէջ, ի Պրոպատիկէ, ուր ան ծնաւ, կան 5 քահանայ և 25 կոյսեր։

10.— Ս. Ստեփանոսի եկեղեցիին մէջ, ուր ան թաղուած է, կան 2 կղերիկոս եւ 15 բորոտներ։

11.— Յոփսափատի Հովտին մէջ, այն պարտէզը՝ որ կը կոչուի Գեթսեմանի եւ ուր թաղուած է Ս. Աստուածածին, և ուր կը պատուուի անոր գերեզմանը, կան 13 քահանայ և կղերիկոս, 6 վանական և 15 կոյսեր՝ վանքին ծառայութեան համար։

12.— Ս. Ղեւոնդիոս 1 քահանայ,
Ս. Յակոբ 1 քահանայ,
Ս. Քառասունք 3 քահանայ,

digitised by A.R.A.R.@

Ս. Քրիստափոր 1 քահանայ,
Ս. Ակիւղաս 1 քահանայ,
Ս. Կիրակոս 1 քահանայ,
Ս. Ստեփանոս 3 քահանայ,
Ս. Դոմիտիանոս 1 քահանայ,
Ս. Յովհաննու Մնունդ, 2 քհնյ.
Ս. Թէոդորոս 2 քահանայ,
Ս. Սարգիս 1 քահանայ,
Ս. Կոզմայի և Դամիանոսի ծընունդ, 3 քահանայ։

13.— Զիթենեաց լերան վրայ կան երեք եկեղեցիներ, առաջինը Քրիստոսի Համբարձման տեղւոյն վրայ, ուր կան 3 քահանայ եւ կղերիկոս, երկրորդը՝ այն տեղը՝ ուր Քրիստոս հրահանգեց իր աշակերտները, ուր կան 3 վանական և 1 քահանայ, երրորդը՝ շինուած ի պատիւ Ս. Կուսին, ուր կան 2 կղերիկոս։

14.— Մենակեացներուն թիւը հետևեալն է. 11 որ կ'երգեն յունարէն, 4 վրացիներ, 6 ասորիներ, 2 հայեր, 5 լատին, 1 որ կ'երգէ սարակինոսներու լեզուաւ։ Զիթենեաց լեռը տանող սանդուղին մօտ կան 2 մենակեացներ, մին յոյն եւ միւսն ասորի, սանդուղին գլուխը՝ 3 մենակեացներ՝ մին յոյն, միւսն ասորի և երրորդը վրացի։

15.— Յովսափատի Հովտին մէջ կայ մենակեաց մը և 26 կոյսերու վանք մը։

16.— Հոն կան 17 կոյսեր որ Կարոլոս կայսեր հրամանաւ կը ծառայեն Ս. Գերեզմանին, եւ նաեւ սպանիական կուսանաց վանք մը։

17.— Ս. Պետրոսի և Ս. Պողոսի վանքին մէջ, ի Պիզանդ, Զիթենեաց լերան մօտ, կան 25 վանականներ։ Ի Բեթանիա, Ս. Ղազարոսի մէջ կայ քահանայ մը, ի Ս. Յովհաննէս՝ որ կը վերաբերի Հայոց, կան 6 վանականներ։

Վերոգրեալները կը գտնուին Երուսաղէմի մէջ և անոր մօտերը, մէկ մղոն հեռու կամ աւելի քիչ։

Ցուցակագիրը Ս. Երկրի այն վանքերուն որ Երուսաղէմէն հեռի են.

18.— Ի Բեթղեհէմ՝ ուր մեր Տէրն Յիսուս Քրիստոս հաճեցաւ ծնանիլ ի Ս. Կուսէն, հոն 15 քահանաներ, կղերիկոսներ, վանականներ, 2 մենակեաց, որ Ս. Սիմէոնի նման սիւնակեաց են։

19.— Ս. Թէոդոսի վանքին մէջ, որ առաջին անգամ անապատին մէջ շինուած է, կան 70 վանականներ, հոն թաղուած է Բարսեղ։ Սարակինոս աւազակները հրդեհած են նոյն վանքը և հոն սպաննած են շատ վանականներ. ուրիշները փախած են հեթանոսներէն՝ որոնք վանքին վերաբերեալ երկու եկեղեցիները քանդած են։

20.— Ս. Սաբայի վանքին մէջ կան 150 վանականներ։

21.— Ս. Խարիթոնի կողմէ շինուած մէկ մղոն հեռաւորութեամբ փոքրիկ վանքի մը մէջ ուր ան կը բնակի սրբութեամբ. ունի վանահայր մը . . . և վանականներ . . . (վանահօր անունը և վանականներու թիւը եղծուած են)։

22.— Ս. Եւթիմիոսի վանքին մէջ կան 30 վանականներ։

23.— Ս. Կուսի վանքին մէջ, ի Գուպիպա, կայ վանահայր մը Լայիտոս անուն և . . . վանականներ (թիւը եղծուած)։

24.— Ս. Յովհաննու վանքը Յորդանանի մօտ, ուր ան կը մկրտէր, կան 10 վանականներ. Ս. Երասիմոս շինեց զայն և հոն թաղուած է։ Ան շինեց վանքին եկեղեցին՝ ուր արձանագրուած է իր անունը։

25.— Ս. Յովհաննու վանքը, Յորդանանի եզերքը, ուրկէ ուխտաւորք գետը կ'իջնեն. հոն կայ ուրիշ եկեղեցի մը և 35 վանականներ։

26.— Երիքովի մօտ կայ Ս. Ստեփանոսի անունով վանք մը եւ Փառանի լերան վրայ վանք մը (անունը եղծուած), չի գիտցուիր թէ այս երկու վանքերուն մէջ որքան վանականներ կան։

27.— Գալիլիոյ Ս. Նազարէթի մէջ կան 12 վանականներ։ Նազարէթէն 1 մղոն հեռի, այնտեղը ուրկէ Հրէայք Քրիստոսը գահավիժել ուզեցին, շինուած է եկեղեցի մը և վանք մը ի պատիւ Ս. Կուսին և հոն կան 8 վանականներ։

28.— Գալիլիոյ Կանայի մէջ, ուր Տէրը ջուրը գինիի փոխարկեց, կան . . . վանականներ (թիւը եղծուած)։

29.— Տիբերիոյ ծովին եզերքը կայ վանք մը, Եօթնակնեան կոչուած, ուր Տէրը հինգ հազար ժողովուրդ կերակրեց հինգ հացով և երկու ձուկով. հոն կան 10 վանականներ։

digitised by A.R.A.R.@

30.— Մովին մօտ կայ եկեղեցի մը յանուն Երկոտասանից (քանի մը բառ եղծուած), հոն է այն տեղը ուր Ան նստեցաւ անոնց հետ. հոն կան 1 քահանայ և 2 կղերիկոս։

31. Տիբերիոյ քաղաքին եպիսկոպոսն է Թէոդորոս, հոն կան 30 կղերիկոսներ, որոնց մէջ են քահանաներ, վանականներ և կանոնիկոսներ. հոն կան հինգ եկեղեցիներ և կոյսերու վանք մը։

32.— Ս. Թաբոր լերան եպիսկոպոսն է Թէոփանէս, հոն կան չորս եկեղեցիներ, առաջինը՝ ի պատիւ Փրկչին, ուր ան խօսեցաւ Մովսէսի և Եղիայի հետ. երկրորդը՝ Մովսէսի և երրորդը՝ Եղիայի, չորրորդը՝ (անունը մոռցուած)։ Հոն կան 18 վանականներ։

33.— Ի Սեբաստիա, ուր թաղուած է Ս. Յովհաննու մարմինը, կայ ընդարձակ եկեղեցի մը՝ որ այժմ աւերակ է. բայց իր գերեզմանը կողմնակի ըլլալով չէ քանդուած, հոն է նաև այն եկեղեցիին տեղը ուր ան բանտարկուեցաւ և գլխատուեցաւ։ Եպիսկոպոսն է Բարսեղ. հոն կան 25 եկեղեցականներ, այսինքն վանականներ եւ կղերիկոսներ։

34.— Ի Սիւքէմ, որ կը կոչուի Նէապոլիս, կայ ընդարձակ եկեղեցի մը, ուր թաղուած է Սամարացի կինը, և ուրիշ եկեղեցիներ. հոն կան եպիսկոպոս մը և կղերիկոսներ. կայ նաև սիւնակեաց մը։

35.— Ի լեառն Սինա կան չորս եկեղեցիներ, առաջինը՝ այն տեղը ուր Աստուած Մովսէսի հետ խօսեցաւ լերան գագաթին վրայ. երկրորդը՝ յանուն Եղիայի, երրորդը՝ Եղիսէի, չորրորդը Ս. Կուսի վանքին մէջ։ Եղիան է անոնց վանահայրը եւ հոն կան 30 վանականներ, լեռն ելնելու կամ իջնելու համար 7700 աստիճաններ կան։

36.— Երուսաղէմէն Ս. Յովսափատ Ս. Կուսի գերեզմանը իջնելու համար 195 աստիճաններ կան, և Զիթենեաց լեռը բարձրանալու համար կան 537 աստիճաններ։

37.— Ս. Կուսի եկեղեցին՝ որ երկրաշարժէն վնասուած է. երկայնութիւնն է երկու թեւերով միասին 39 կանգուն, (dexters) ճակատը 35 կանգուն, ատեանը 32 կանգուն, ատեանին երկայնքը 50 կանգուն։

38.— Բեթղեհէմի եկեղեցին ունի 38 կանգուն երկայնութիւն, ճակատը 23 կանգուն, միւս ճակատը 17 կանգուն, ունի 69 սիւն։

39.— Ս. Գերեզմանի եկեղեցին ունի 107 կանգուն շրջապատ. և գմբեթը՝ 54 կանգուն։

40.— Ս. Գերեզմանէն մինչև Գողգոթա 28 կանգուն է. և Ս. Գողգոթայէն մինչև Գիւտ Խաչի տեղը 19 կանգուն։

41.— Ս. Գերեզմանը և Ս. Գողգոթան միասին և Ս. Կոստանդիանոսի եկեղեցին, անոնց ամբողջ տարածութիւնը ունի 96 կանգուն և լայնութիւն 30 կանգուն։

42.— Ս. Սիոնի եկեղեցին ունի 39 կանգուն երկայնութիւն և 26 կանգուն լայնութիւն։

43.— Քահանաներու, սարկաւագներու, վանականներու, կղերիկոսներու եւ ամբողջ եկեղեցական դասուն համար պատրիարքին կողմէն զրկուած գումարն է 630 ոսկի, . . . (եղծուած) համար 550 ոսկի, եկեղեցական չէնքերու նորոգութեան համար 300 ոսկի, Սարակինոսներու համար 580 ոսկի, (վերջին երկու տողերը անընթեռնելի են)։

Մ. ԵՊՍ. ԱՂԱՒՆՈՒՆԻ

(Մնացեալն յաջորդիւ)



ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ ԽՕՍՔ

Պատմական փոքրորիկներու ճգնաժամային վայրկեաններուն, ո՛չ թէ անհատներու խորհրդածութիւնները այլ ամբոխին զգացողութիւնն է որ յանախ ընթացք կու տայ գործերուն։

*

Ծնողները յանախ անարդար են, եւ անհանդուրժելի կը գտնեն իրենց զաւակներուն մոս փիզիքական եւ բարոյական այն յատկութիւնները զոր իրենք իսկ ընծայած են անոնց։

*

Սխալ մտքի նշան է չափազանց յարիլ իր կարծիքներուն. այն ամպերը, զոր կը յարուցանէ անձնասիրութիւնը, կը մթագնեն բանականութեան լոյսը։

digitised by A.R.A.R.@